

տութեամբն զօշաքաղ շրջի, եւ յարածամ ի ճաշ եւ յընթրիս դեզերեսցի անարգել, եւ անժոյժ որովայնիւ միշտ սեղանոյ եւ ըմպելեաց սպասիցէ, եւ իբրեւ զհուր զամենայն կերակուրսն լափիցէ: Այլ եթէ էր հնար այնպիսւոյն եւ որովայնն տանէր, զլերինս եւս կլանել ախորժէր առ անյագ որկորստութեանն, եւ զարկս եւ զկարասս յորովայնն արկանէր, եւ զթակոյկքն միանգամայն անդր քամէր»: Յետոյ կը նկարագրէ վայն արբեցած ընկած, եւ ործալու վիճակին մէջ. ուր «եթէ մարդ ոչ լինի ի մօտն, շունք եկեալ զբերանն լիզեսցեն, զի կարօտ են՝ լափեն, եւ բարեկամութիւն առնեն անզգային. եւ նմա այսպէս թուի՝ եթէ բարեկամ ոք եկեալ՝ յորջորջէ զինքն, եւ կիպրացի<sup>1</sup> ծիրանածայր դաստառակաւ (որ է շան կարմիր լեզուն՝) սըրբէ զբերանն: Եւ նա բուռն հարեալ զտից շանն՝ եւ համբուրէ անյագաբար, եւ շնորհակալ լինի նմա»:

Տխուր եւ միանգամայն ծիծաղաշարժ է այդ տեսարանը. բայց շատ աւելի դառն է Նարեկացւոյն վկայութիւնը, որ խօսելով «զանհանճար ծախուցն՝» որ զինարբու-

1. Այդպէս ըստ նորագիր հաւաքածոյի մը ճառից Մանդակունւոյն (ի Վ. Ենեա.), զոր ճառընտիրը վրիպակ ընթերցմամբ «կիպրիցի» կ'ըսէ: